ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԵՎՇԱՏՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ ԳՐԻԳՈՐԻ

ՄԱՐԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРЕВШАТЯН КОРЬЮН ГРИГОРЕВИЧ

ВНУТРИГОСУДАРСТВЕННЫЕ ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА ЧЕЛОВЕКА НА ПОЛУЧЕНИЕ МЕДИЦИНСКОЙ ПОМОЩИ И ОБСЛУЖИВАНИЯ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02- "Публичное право конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление"

ЕРЕВАН-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի «Գլաձոր» համալսարանում

Գիտական ղեկավար՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ժ. Դ. Ջհանգիրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Ա. Այվազյան
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Է. Է. Շաթիրյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2015թ. նոյեմբերի 20-ին, ժամը 14^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2015թ. հոկտեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском университете "Гладзор"

Научный руководитель: Доктор юридических наук, профессор Ж. Д. Джангирян

Официальные оппоненты: Доктор юридических наук, профессор Н. А. Айвазян
Кандидат юридических наук, доцент Э. Э. Шатирян

Ведущая организация: Центр конституционного права РА

Защита состоится 20 ноября 2015г., в 14^{30} часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 20 октября 2015г.

Ученный секретарь специализированного
совета, кандидат юридических наук, доцент А. А. Манасян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Լինելով անհատի իրավական կարգավիճակի ամենակարևոր տարրերից մեկը՝ մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքն ամրագրված է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Սահմանադրության 38-րդ հոդվածում. «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: …»: ՀՀ Սահմանադրությունը մարդուն, նրա իրավունքներն ու հիմնարար ազատությունները հռչակում է որպես բարձրագույն արժեք[1], որոնք հարգվում և պահպանվում են պետության կողմից: Այդ իրավունքների և ազատությունների թվին է դասվում նաև մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը, որի բովանդակությունը որպես անհատական և հանրային բարիք կանխորոշվում է առողջության սոցիալական արժեքով:

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես սոցիալական պետություն, որն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում, իր գործունեության հիմքում որպես գերակա խնդիր և առաջնահերթություն դնում է հանրության առողջության պահպանումը և յուրաքանչյուր անձի երաշխավորում է բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքը, որը, մասնավորապես, նպաստում է անհատի կյանքի երկարացմանը և դրա որակի բարելավմանը: Խնդիրը նրանում է, որ ազգաբնակչության ծերացումը և աշխատունակության անկումը անխուսափելիորեն բարձրացնում են առողջության արժեքը, քանի որ այն իրենից ներկայացնում է նյութական բարիքների ստեղծման ամենակարևոր աղբյուրը:

Վերջին 15-20 տարիների ընթացքում՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, շուկայական հարաբերությունների ձևավորմանը զուգընթաց նկատվում է բժշկական օգնության և սպասարկման տրամադրման գործընթացի ոչ շոշափելի բարելավում, ուստի որակի ապահովման առումով բավականին անելիքներ կան քննարկվող ոլորտում, քանի որ պարբերաբար ականատես ենք լինում անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի խախտման դեպքերի: Բժշկական օգնությունն ու սպասարկումը հանրության համար առավել հասանելի և մատչելի դարձնելու նպատակով անհրաժեշտ է կատարելագործել բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը և առողջապահության կազմակերպման իրավական կարգավորումը՝ հստակեցնելով

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), 27.11.2005, հոդված 5:

վճարովի և անվճար բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու կարգը՝ հաշվի առնելով նաև միջազգային և տարածաշրջանային համապատասխան կառույցների առաջարկները, փորձն ու չափորոշիչները:

Ներկայում, պետական և համայնքային նշանակության առողջապահական հաստատությունների կողմից ամբողջ ծավալով չի ապահովվում անվճար բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը, որը մեծամասամբ կախված է առողջապահական պետական համակարգի ոչ լիարժեք ֆինանսավորման հետ: Մասնավորապես, բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձը ստիպված է լինում վճարել իր բուժման ծախսերի մի մասը սեփական միջոցներից, կամ պետական պատվերով բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձը ձեռք է բերում անհրաժեշտ դեղորայքը կամ բժշկական նշանակության ապրանքները իր միջոցների հաշվին կամ ոչ օրինական կարգով վճարում է բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերող անձնակազմին մատուցված բժշկական օգնության և սպասարկման համար: Քննարկվող խնդիրն առաջին հերթին պայմանավորված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց ոչ բարեկեցիկ պայմաններով, ֆինանսական սղության պատճառով վերապատրաստումների կրճատմամբ և այլ պատճառներով:

Բացի այդ, անհրաժեշտություն է առաջանում բժշկական օգնության և սպասարկման ոլորտում բարձրացնել հանրության իրավագիտակցության մակարդակը, կատարելագործել առողջապահության կառավարման մեթոդները և հնարավորինս իրավական կարգավորման ենթարկել բժշկական օգնության և սպասարկման բոլոր տեսակները, ստեղծել գործուն մեխանիզմներ, որոնց միջոցով կյանքի կկոչվի մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքը, քանի որ ժամանակի քննության ընթացքում անհերքելի է դարձել այն փաստը, որ մարդու իրավունքների, այդ թվում՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի լիարժեք իրացման համար բավարար չեն միայն դրանց ճանաչումը և սահմանադրորեն ամրագրումը, այլ անհրաժեշտ է, որ այդ իրավունքներն ունենան նաև արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ, քանզի հենց մարդու իրավունքների և ազատությունների մեջ է ամփոփված մարդկության կողմից ճանաչված և իմաստավորված հումանիստական արժեքների ողջ ներուժը:

Եթե այս ամենին հավելենք նաև այն հանգամանքը, որ ներպետական իրավական համակարգում դեռևս լիարժեք հաղթահարված չեն բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և առողջության պահպանման իրավունքների միասնական ընկալման և համարաժեք իրավակիրառական պրակտիկայի ձևավորման հիմնախնդիրները, որոնք լուծման անհրաժեշ-

տություն են առաջադրում, ապա առավել ակնհայտ է դառնում ընտրված թեմայի արդիականությունը և համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Նման արդիական հարցերն ու հիմնախնդիրներն են պահանջում, որպեսզի աշխատանքում ուսումնասիրության առարկա դառնա մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի ներկա սահմանադրաիրավական վիճակը, առավել մանրակրկիտ մեկնաբանվի միջազգային և տարածաշրջանային փորձը և հստակեցվեն այն իրավունքները, որոնցով պետք է օժտված լինի անձը բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս:

Ուսումնասիրության նպատակները և խնդիրները: Ատենախոսության նպատակն է ամբողջական և բազմակողմանի ուսումնասիրության ենթարկել մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի բովանդակությունը և կառուցվածքը իրավակիրառման պրակտիկայում, հստակեցնել այդ իրավունքի էությունը, տեղը և դերը սահմանադրական իրավունքների համակարգում, համակողմանի ուսումնասիրել և վերլուծել մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքը և մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքը՝ բացահայտելով դրանց անքակտելիությունը՝ որպես մարդու բարձրագույն սահմանադրական արժեքներ, վերհանել ՀՀ-ում առկա այն հիմնախնդիրները, որոնց արդյունավետ լուծման հրամայականները ուղղված են քննարկվող իրավունքի լիարժեք երաշխավորմանը և իրացվելիությանը:

Ուսումնասիրության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է հասնել հետևյալ խնդիրների լուծմանը.

- բնութագրել և առանձնացնել մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի հասկացությունը, բովանդակությունը և հիմնական հատկանիշները,

- բացահայտել մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և առողջության պահպանման սահմանադրական իրավունքների էությունը՝ պարզաբանելով դրանց հարաբերակցությունը մեկը մյուսի հետ,

- հայտնաբերել այն խնդիրները, որոնք առաջ են գալիս բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի իրացման արդյունքում՝ հստակեցնելով այն իրավունքների ցանկը, որոնցով պետք է օժտված լինի յուրաքանչյուր ոք, ով ՀՀ տարածքում ստանում է բժշկական օգնություն և սպասարկում՝ հաշվի առնելով և վերլուծելով միջազգային և տարածաշրջանային փորձն ու մոտեցումները,

- վերանայել և հստակեցնել ՀՀ-ում մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի իրացման երաշխիքները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ուսումնասիրության գիտական նորույթը կայանում է նրանում, որ ատենախոսական աշխատանքում կատարվում է մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի համալիր վերլուծություն՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշի և ժամանակակից սոցիալական պետության հիմնական գործառույթի, ինչպես նաև հասարակության և պետության կայունության ու բարգավաճման անհրաժեշտ նախապայմանի: Բացի այդ, առաջին անգամ սույն հետազոտությամբ ուսումնասիրվում և բացահայտվում են մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի ծագման, ձևավորման, զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում և փորձ է արվում ընդհանրացնել այդ իրավունքի պաշտպանության գործընթացը՝ մշակելով դրա կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ՝ հիմքում դնելով միջազգային և տարածաշրջանային չափորոշիչներն ու իրավական նախադեպերը: Սույն ուսումնասիրությամբ համալիր և բազմակողմանի վերլուծության միջոցով հետազոտվում է սոցիալական պետության ամենակարևոր և առաջնային սահմանադրական պարտականություններից մեկը՝ մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի պաշտպանությունը՝ որպես մարդու հիմնարար սահմանադրական իրավունք:

Գիտական որոշակի նորույթ են բովանդակում նաև սահմանադրական և օրենսդրական նորմերի ուսումնասիրության արդյունքում մի շարք հարցերի վերաբերյալ փոփոխություններ կատարելու կոնկրետ առաջարկությունները:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները: Ելնելով ատենախոսության մեջ կատարված վերլուծություններից ու եզրահանգումներից՝ պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Վերլուծելով արդեն իսկ ձևավորված հայեցակարգային մոտեցումները «մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք» և «բժշկական օգնություն և սպասարկում» հասկացությունների վերաբերյալ և բացահայտելով այդ հասկացության իրավաընկալման ու իրավակիրառման սահմաններն արդի իրավամտածողությունում՝ այն առավել ամբողջական բնորոշել ենք որպես հանրային կյանքում պետության կողմից երաշխավորվող և պաշտպանվող մարդու այն հիմնական իրավունքների ամբողջությունը, որով մարդուն հնարավորություն է ընձեռնվում ստանալ բարձրորակ բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև՝ յուրաքանչյուր մարդու արժանապատիվ կեցության և լիարժեք ինքնադրսևորման բնական ու անօտարելի հնարավորությունների համակցություն, որը պետք է մատչելի լինի բոլորին հավասարապես:

2. «Մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք» հասկացության բազմակողմանի ուսումնասիրության արդյունքում «մարդու առողջության պահպանման իրավունք» հասկացությունը դիտարկվեց անքակտելի առաջինի հետ որպես մարդու բարձրագույն սահմանադրական իրավունքներ, որտեղ մարդու առողջության պահպանման իրավունքը բնորոշել ենք որպես առողջության հնարավորինս բարձր չափորոշիչով ապահովված լինելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ տարաբնույթ հաստատություններից, ապրանքներից, ծառայություններից և պայմաններից օգտվելու՝ պետության կողմից երաշխավորված իրավունք՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդու առողջությունը նրա ֆիզիկական, մտավոր և սոցիալական բարեկեցության վիճակն է:

3. Հաշվառելով «մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու» և «մարդու առողջության պահպանման» իրավունքների՝ բարձրագույն սահմանադրական արժեքների անքակտելիությունը՝ կատարվել է առնվազն հիսուն օտարերկրյա պետությունների սահմանադրությունների ուսումնասիրություն, որտեղ պայմանականորեն բաժանվել են՝ ա) սահմանադրություններ, որոնցում ուղղակի ձևով ամրագրված է մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը և/կամ առողջության պահպանման իրավունքը, բ) սահմանադրություններ, որոնցում ամրագրված չեն մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև առողջության պահպանման իրավունքները, գ) սահմանադրություններ, որոնցում այս իրավունքներն ամրագրված են անուղղակի կերպով՝ ներկայացված լինելով մի շարք հարակից իրավունքների միջոցով կամ որոնցում հղում է կատարվում հատուկ օրենսդրությանը: Կատարված վերլուծությունը անհրաժեշտ էր այնքանով, որքանով որ ՀՀ Սահմանադրությունն առողջության պահպանման իրավունքի ամրագրման հարցում հանդես է բերել որոշակի ինքնատիպություն. 2005թ. ՀՀ Սահմանադրության բարեփոխումների ժամանակ 1995թ. ՀՀ Սահմանադրության սկզբնական տեքստից հանվեց «յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք» ձևակերպմամբ դրույթը՝ խմբագրված տեսքով թողնվեց «յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք» և «յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք» ձևակերպմամբ դրույթները:

Կարևորել ենք և առաջարկել սահմանադրական բարեփոխումների արդյունքում մարդու առողջության պահպանման իրավունքը ամրագրել Մայր օրենքում հետևյալ խմբագրությամբ՝ «Յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք: Բնակչության առողջության պահպանման, բարե-

լավման և ամրապնդման համար պետությունն իրականացնում է օրենքով սահմանված առողջապահական ծրագրեր և միջոցառումներ»:

4. Իրավաբնկալման նշված մոտեցման հիման վրա, որտեղ «մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու» և «մարդու առողջության պահպանման» սահմանադրական իրավունքները չեն կարող դիտարկվել և կյանքի կոչվել իրարից անկախ, քանի որ դրանք փոխլրացնում են մեկը մյուսին, բխում են իրարից և կոնկրետացնում են մեկը մյուսին, սահմանադրական իրավունքների համակարգում այդ իրավունքները դիտարկվել և դասակարգվել են որպես սոցիալական պետության բազային սոցիալական իրավունքներ՝ պատկանելով իրավահարաբերությունների կոնկրետ սուբյեկտների և հավասարազոր լինելով սահմանադրաիրավական կարգավորման ոլորտի քաղաքական և անձնական իրավունքներին՝ որպես մարդու և քաղաքացու անօտարելի սուբյեկտիվ իրավունքներ:

5. Հաշվի առնելով, որ մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքը անմիջական գործող իրավունք է և, պետությունը սահմանափակված է այդ իրավունքով, դրա երաշխավորման, ապահովման ու պաշտպանության համար առանձնահատուկ կարևորություն է ստանում այնպիսի գործուն արտադատական մեխանիզմի ստեղծումը, ինչպիսին է «առողջապահության համակարգի հաշտարար»-ի ինստիտուտը, որի ձևավորմամբ կլուծվեն այնպիսի առաջնային խնդիրներ, ինչպիսիք են՝ հանրապետությունում բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվող անձանց իրավական և իրավաբանական պաշտպանվածության աստիճանի բարձրացումը, մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի օրենսդրական ապահովման կատարելագործմանը նպաստելը, այդ իրավունքի պաշտպանության հնարավորությունների և մատչելիության ապահովումը:

Ելնելով սոցիալական և իրավական պետությունում մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի առավել արդյունավետ պաշտպանության նկատառումներից՝ առաջարկվում է ՀՀ-ում ներդնել բժշկական ապահովագրության ինստիտուտը: Որպես առաջին քայլ պետք է ընդունել «Բժշկական ապահովագրության մասին» ՀՀ օրենքը և դրա կիրարկումն ապահովող իրավակարգավորման պարտադիր պայմանները, որոնցով լիարժեք կերաշխավորվեն բժշկական ապահովագրության և դրա հետ կապված առողջության պահպանման, բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու՝ անձի սահմանադրական իրավունքի իրացման մատչելիությունը, ինչպես նաև՝ բնակչության առողջության պահպանման պետական ծրագրերի արդյունավետությունը:

6. Մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքը՝ լինելով մարդու առողջության պահպանումն ու վերականգնումը երաշխավորող հիմնական իրավունքը, առանձնանում է որպես անհատի սահմանադրական կարգավիճակի կարևորագույն տարր և դրվում է անհատի իրավական կարգավիճակի հիմքում, իրացվում է մարդու և քաղաքացու գրեթե բոլոր հիմնական իրավունքների ու ազատությունների իրացման միջոցով: Բացահայտելով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի տեղը սահմանադրական իրավունքների համակարգում՝ ցույց է տրվել այդ իրավունքի փոխադարձ կապը, հարաբերակցումը սահմանադրական այլ իրավունքների հետ:

7. Ընդգծելով իրավական պետության դերը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրացման համար երաշխիքների սահմանման տեսանկյունից՝ կարևորել ենք բժշկական օգնության և սպասարկման ոլորտում պետական քաղաքականության նվազագույն նպատակների ու սկզբունքների օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա տեսությունից տեղափոխվել իրավական երաշխիքների՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի իրացման գործնական քայլերի դաշտ: Դրանով կբարձրացվի բժշկական օգնության և սպասարկման անվտանգության ապահովումը, արդյունավետությունը և որակը, մատչելիությունը և հասանելիությունը, կմշակվեն և կսահմանվեն արդյունավետ բժշկական մեթոդներ և բժշկական օգնության և սպասարկման որակի ապահովման պետական չափորոշիչներ՝ հիմքում ունենալով այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ հիվանդությունների կանխարգելման, բնակչության սոցիալապես անապահով խմբերի առողջական խնդիրների գերակայությունը, բժշկական օգնության և սպասարկման բնագավառում սոցիալական արդարության ապահովումը, բժշկական հաստատությունների համաչափ զարգացումը պետության ամբողջ տարածքում, բժշկական անձնակազմի համալրման և շարունակական մասնագիտական զարգացման գերակայությունը:

8. Մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի առավել արդյունավետ պաշտպանության և իրավական հստակ երաշխիքների սահմանման նկատառումներից ելնելով՝ առաջարկվում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի՝ «Մարդու իրավունքները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս» վերտառությամբ 5-րդ հոդվածը լրացնել և փոփոխել հետևյալ բովանդակությամբ. «Բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝

1. ընտրել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին (ազատ ընտրության իրավունք),

2. ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկահիգիենիկ պահանջներին համապատասխանող պայմաններում (բժշկահիգիենիկ չափորոշիչների պահպանման իրավունք),

3. պահանջել բժշկի օգնությանը դիմելու արդյունքում իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերից (անձնական և բժշկական տեղեկությունների գաղտնիության պահպանման իրավունք),

4. իրազեկ լինել իր հիվանդության մասին և համաձայնություն տալ բժշկական միջամտության համար (տեղեկացվածության և համաձայնության իրավունք),

5. հրաժարվել բժշկական միջամտությունից, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերից (ազատ կամահայտնության իրավունք),

6. արժանանալ հարգալից վերաբերմունքի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից (հարգանքի և արժանապատվության իրավունք),

7. ստանալ բժշկական օգնություն և սպասարկում ժամանակին, նախօրոք որոշված ժամկետներում (ժամանակը հարգելու իրավունք),

8. ստանալ բժշկական օգնություն և սպասարկում անվտանգ պայմաններում (անվտանգության իրավունք),

9. օգտվել նորագույն մեթոդներով մատուցվող բժշկական օգնությունից և սպասարկումից (նորարարության իրավունք),

10. ստանալ բարձրորակ բժշկական օգնություն և սպասարկում՝ հիմնված ժամանակակից չափորոշիչների վրա (որակի չափորոշիչների պահպանման իրավունք),

11. հնարավորինս զերծ մնալ տառապանքներից և ցավից բժշկական օգնության և սպասարկման ցանկացած փուլում (ոչ անհրաժեշտ տառապանքից և ցավից զերծ մնալու իրավունք)»:

Ատենախոսության տեսական հիմքը, ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտման տեսական հիմքն են կազմել հայրենական և արտասահմանյան բազմաթիվ հեղինակների աշխատություններ: Ատենախոսական հետազոտությունը հիմնված է տարատեսակ գիտական աղբյուրների՝ մենագրությունների, գիտական հոդվածների, գիտագործնական համաժողովների նյութերի ուսումնասիրման վրա: Աշխատան-

քում հեղինակը ուսումնասիրել և հաշվի է առել հայրենական և մի շարք հայտնի արտասահմանյան իրավագետ-գիտնականների արտահայտած կարծիքներ: Այդ բնագավառում առավել աչքի ընկնող հայրենական, ռուսական, արևմտյան և եվրոպական հեղինակներից են՝ Ա.Ա. Յունուսովը, Ա. Շայոն, Գ. Բաղիրյանը, Գ.Գ. Հարությունյանը, Գ.Մ. Բուտենկոն, Ե.Ա. Լուկաշևան, Ե.Ե. Մաչուլսկայան, Լ.Ա. Օկունկովը, Հ.Մ. Խաչատրյանը, Մ.Վ. Բագլայը, Մ. Օզդենը, Ն.Ա. Այվազյանը, Ն.Վ. Կոսոլապովան, Ն.Վ. Պուտիլոն, Պ. Սարգոսը, Ս.Ա. Դյուժիկովը, Վ.Դ. Զորկինը, Վ.Ն. Այվազյանը, Վ.Վ. Վիկտորովնան, Տ.Շ. Կապանաձեն, Տ.Վ. Պալշինան, Տ.Ֆ. Եֆրեմովան, Օ.Ա. Ենիկեյևը և այլոք:

Հետազոտման տեսական և գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում բովանդակվող եզրահանգումներն ու գործնական առաջարկություններն ունեն առաջին հերթին մեթոդական նշանակություն և թույլ են տալիս շարունակել ատենախոսի կողմից առաջադրված թեմայի գիտական և գործնական ուսումնասիրությունը, որի արդյունքում անհրաժեշտ է հաշվի առնել պարբերաբար փոփոխվող սոցիալական հարաբերությունների նորմատիվ-իրավական բազան՝ նպատակ ունենալով ՀՀ-ում զարգացնել և կատարելագործել մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի իրագործումը:

Հետազոտման նյութերը, կատարված եզրահանգումներն ու տեսական դրույթները կարող են օգտագործվել գիտա-գործնական աշխատանքների, իրավաբանական առարկաների դասավանդման ընթացքում, մասնավորապես՝ սահմանադրական իրավունքի, մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների, մարդու իրավունքների հիմունքների և այլն:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և ներդրումը: Ատենախոսությունը նախապատրաստվել է Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ամբիոնում, որտեղ քննարկվել են հետազոտության հիմնական դրույթները: Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքին առնչվող հիմնական հարցերը քննարկման առարկա են դարձել Բաց հասարակության հիմնադրամների Մակեդոնիայի մասնաճյուղի և «Սուրբ Կիրիլ-Մեթոդիուս» համալսարանի կողմից Մակեդոնիայում անցկացված (18-22.05.2010թ.) «Առողջապահություն և իրավունք, մարդու իրավունքները և պացիենտի խնամքը առարկայի դասավանդումը հետդիպլոմային կրթությունում» երկրորդ միջազգային գիտաժողովի ընթացքում, «Առողջապահական նախաձեռնությունների հայկական կենտրոն» հ/կ կողմից Լուսակերտում անցկացված (22-23.07.2011թ.) «Մարդու իրավունքները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս» դասընթացի շրջանակներում, նաև՝ Բաց հասարակության հիմնադրամների Վրաստանի մասնաճյուղի կողմից Վրաստանում անց-

կացված (08-11.09.2012թ.)՝ ««Առողջապահություն և իրավունք, Մարդու իրավունքները և պացիենտի խնամքը» առարկայի դասավանդումը բակալավրիատում և մագիստրատուրայում» միջազգային գիտաժողովի ընթացքում:

Տեսական եզրահանգումներն ու հիմնական դրույթները տեղ են գտել ատենախոսի կողմից հրատարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Հետազոտության առջև դրված խնդիրների համաչափ լուծման նկատառումներով պայմանավորված՝ ընտրվել է աշխատության այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն է տվել համարժեք խորությամբ ներկայացնել հետազոտության առարկան կազմող հիմնախնդիրները: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք ներառում են հինգ ենթագլուխ, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ իրավական աղբյուրների ու գիտական աշխատությունների ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, ատենախոսության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև՝ պաշտպանության ներկայացվող դրույթները:

Աշխատանքի առաջին գլխում՝ **«Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի հասկացությունը»** վերտառությամբ, փորձ է արված բացահայտելու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի բովանդակությունը, կառուցվածքը, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի տեղը սահմանադրական իրավունքների համակարգում, նաև՝ այդ իրավունքի ամրագրման կարևորությունը երկրի Մայր օրենքում:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ **«Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի բովանդակությունը և կառուցվածքը»** վերտառությամբ, Հեղինակը փորձ է կատարում բացահայտել բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի բովանդակության հասկացությունը՝ կարևորելով այնպիսի տարրերի սահմանումների հստակեցումը և ամրագրումը, ինչպիսիք են՝ «բժշկական օգնություն և սպասարկում», «առողջություն», «առողջության պահպանման իրավունք» հասկացությունների բովանդակությունը: Հեղինակը՝ որպես բժշկական օգնութ-

յուն և սպասարկում ստանալու իրավունքի երաշխավորման առաջնային հրամայական է դիտարկում վերը նշված հասկացությունների բացահայտումը, և այդ հանգամանքով պայմանավորված «բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք» հասկացության իրավագիտական բնութագրիչները վերհանելը, քանզի «բժշկական օգնություն և սպասարկում» և «առողջություն» հասկացությունների տարաբնույթ ընկալումներով և մեկնաբանություններով պայմանավորված պատմական տարբեր ժամանակաշրջաններում տարբեր կերպ է ընկալվել և մեկնաբանվել մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական հիմնարար իրավունքը:

Հեղինակը իրավաընկալման պատմական և ժամանակակից մոտեցումների հիման վրա բացահայտում է «բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք» հասկացության բովանդակությունն ու էությունը, և այդ հայեցակարգային մոտեցումների հիման վրա բացահայտում է այդ իրավունքի անկապտելի հատկանիշները, որոնց ամբողջականությունն ու անքակտելիությունը վկայում են այդ իրավունքի տեղի և դերի առաջնայնությունը սահմանադրական իրավունքների համակարգում:

Մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի էությունն առավել պարզորոշ հասկանալու համար Հեղինակը փորձել է դասակարգել մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները և այդ դասակարգմամբ որոշել բժշկական օգնություն և սպասարկում ստանալու՝ անձի սահմանադրական իրավունքի տեղը՝ ընդգրկելով այդ իրավունքը սոցիալական իրավունքների դասակարգչում՝ որպես անձի սուբյեկտիվ իրավունք:

Վերջապես, հիմք ընդունելով արված վերլուծությունները՝ Հեղինակը տալիս է բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի հասկացությունը, որի ներքո պետք է հասկանալ պետության կողմից երաշխավորվող և պաշտպանվող մարդու այն հիմնական իրավունքների ամբողջությունը, որով մարդուն հնարավորություն է ընձեռնվում ստանալ բարձրորակ բժշկական օգնություն և սպասարկում:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ **«Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը սահմանադրական իրավունքների համակարգում»** վերտառությամբ, Հեղինակն ընդգծում է բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի յուրահատուկ դերակատարությունը և վճռական ներազդեցությունը մարդու սահմանադրական կարգավիճակի ձևավորման և իրացման վրա, քանի որ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքը՝ հանդիսանալով մարդու առողջության պահպանումն ու վերականգնումը երաշխավորող հիմնական իրավունքը, առանձնանում է որպես անհատի սահմանադրական կարգավիճա-

կի կարևորագույն տարր և դրվում է անհատի իրավական կարգավիճակի հիմքում:

Հեղինակը հանգում է նրան, որ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքն իրացվում է մարդու և քաղաքացու գրեթե բոլոր հիմնական իրավունքների ու ազատությունների իրացման միջոցով: Հեղինակը եզրակացնում է, որ առանց բժշկական օգնության և սպասարկման ոչ միայն մարդու կյանքն է անհնարին, նաև վերջինիս ազատ զարգացումը, իսկ առողջության պահպանումը որպես փոխկապակցված միջոցառումների ամբողջություն անհնար է առանց որակյալ, ժամանակակից և կանխարգելիչ բժշկական օգնության և սպասարկման:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ **«Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի ամրագրման կարևորությունը Սահմանադրությունում»** վերտառությամբ, բացահայտվում են «բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք» դրույթի ամրագրման կարևորությունն ու անհրաժեշտությունը երկրի Մայր օրենքում: Քանի որ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի հետ սերտորեն կապված բազային սոցիալական իրավունքներից է նաև առողջության պահպանման իրավունքը, Հեղինակը փորձ է անում պարզաբանել «առողջության պահպանման իրավունք» դրույթի բացակայության արդարացվածությունը Սահմանադրությունում: Հեղինակի կարծիքով, այս երկու բազային սոցիալական իրավունքները չեն կարող դիտարկվել և կյանքի կոչվել իրարից անկախ, քանի որ դրանք փոխլրացնում են մեկը մյուսին, բխում են իրարից և կոնկրետացնում են մեկը մյուսին:

Ուստի, Հեղինակը կարևորել և առաջարկել է սահմանադրական բարեփոխումների արդյունքում մարդու առողջության պահպանման իրավունքը ամրագրել Մայր օրենքում հետևյալ խմբագրությամբ՝ «Յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք: Բնակչության առողջության պահպանման, բարելավման և ամրապնդման համար պետությունն իրականացնում է օրենքով սահմանված առողջապահական ծրագրեր և միջոցառումներ»:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ **«Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի իրացման երաշխիքները»** վերտառությամբ, դիտարկվել են մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի իրացման հիմնախնդիրները, այդ իրավունքի իրավական կարգավորման և երաշխավորման կարգը: Սույն գլխի շրջանակներում բացահայտվել են բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի իրացման մատչելիության երաշխավորման համար հիմնարար հասկացություններ, ինչպես նաև՝ բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվողների

մի շարք իրավունքներ:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ **«Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի իրավական կարգավորումը և երաշխավորման կարգը Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ, ուսումնասիրվում են բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի այն սոցիալ-տնտեսական, քաղաքական, բարոյական, իրավաբանական, կազմակերպչական երաշխիքները, որոնք անձանց համար ստեղծում են հավասար հնարավորություններ իրենց իրավունքների և ազատությունների իրացման համար:

Հեղինակի մոտեցմամբ, ներկայում իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ բողոքների և դիմումների լուծման առկա կառուցակարգերը շատ հաճախ բավարար չեն լինում: Մասնավորապես, վարչարարական քաշքշուքներից և անտեղի խոչընդոտներից խուսափելու համար շատ քաղաքացիներ չեն դիմում իրավունքների և ազատությունների պաշտպանության ընդունված միջոցների՝ դատական, իրավապահ մարմինների և գործադիր իշխանության համապատասխան մարմինների, քանի որ այդպիսիք պահանջում են շատ ժամանակ, նաև՝ դրանց ընթացակարգերը հաճախ խիստ ձևականացված են և դժվարամատչելի: Առողջության պահպանման և բժշկական օգնության ու սպասարկման ոլորտը անմասն չէ նմանատիպ վարչարարություններից ու խոչընդոտներից: Կատարելով մի շարք երկրների փորձի ուսումնասիրություն՝ Հեղինակն առաջարկում է որպես մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի իրացման իրավական երաշխիք ՀՀ-ում ստեղծել բժշկական օգնության և սպասարկման ոլորտի գործուն մեխանիզմ: Խոսքը «առողջապահության համակարգի հաշտարարի ինստիտուտ»-ի ներդրման մասին է, որի հիմնական նպատակը առողջության պահպանման և բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից օգտվողների անվտանգության և բարեկեցության ապահովումն է նրանց պաշտպանության և իրազեկվածության միջոցով:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ **«Բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձանց իրավունքների իրացումը Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ, Հեղինակն անդրադառնում է բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձանց իրավունքների իրացվելիությանը՝ կարևորելով առաջնահերթությամբ «բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվող անձ» եզրույթի հստակեցումը և ամրագրումը, քանի որ ՀՀ ընթացիկ օրենսդրությամբ տրված չէ դրա հասկացությունը: Հեղինակն առաջարկում է գործող օրենսդրությունում օգտագործվող «հիվանդ» եզրույթը փոխարինել «պացիենտ» եզրույթով, քանի որ բժշկական օգնությունից

և սպասարկումից օգտվում են ոչ միայն հիվանդության առկայության պարագայում, այլև՝ առողջ լինելու: Ուսումնասիրելով ներպետական և միջազգային իրավական ակտերով ամրագրված՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս մարդու իրավունքները՝ Հեղինակը հանգում է այն եզրակացությանը, որ հրատապ է օրենսդրորեն լրացնել և ամրագրել մարդու իրավունքները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս:

Եզրակացությունում ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքներն ու Հեղինակի եզրահանգումները, որոնք ամփոփ հանգում են հետևյալին.

- Մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հիմնարար սահմանադրական իրավունքը՝ որպես ցանկացած քաղաքակրթության կարևորագույն սոցիալ-իրավական արժեքներ, պետք է գտնվեն յուրաքանչյուր հասարակության զարգացման բուռն գործընթացների կենտրոնում, ուղենիշ և նպատակ դառնան պետության գործունեության բոլոր բնագավառների համար, ներդաշնակ լինեն հասարակական ու պետական շահերի, հասարակական և այլ միավորումների, բնակչության տարբեր խմբերի կոլեկտիվ իրավունքների հետ՝ ապահովելով հասարակության կայուն զարգացումը:

- Ժամանակակից պետությունները, ամրագրելով մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներից և ազատություններից մեկը, առաջին հերթին ընդգծում են անձի վարքագծի չափորոշիչներն ու ձևերը տվյալ ոլորտում, որոնք դիտվում են պարտադիր և օգտակար սոցիալական համակարգի կայուն գործունեության և հասարակական հարաբերությունների ներդաշնակությունն ու զարգացումը ապահովելու համար, նաև՝ բացահայտում են պետության և անձի փոխհարաբերությունների առանցքային սկզբունքները արծարծվող բնագավառում, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արդյունավետ իրականացման ու պաշտպանության գործընթացի էությունը: Ցանկացած սոցիալական պետության սահմանադրական կարգի և սահմանադրական սկզբունքների շարքում մարդու իրավունքները և ազատությունները, այդ թվում՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հիմնարար սահմանադրական իրավունքը՝ որպես բարձրագույն արժեք պետք է դիտվի առաջնային և օժտվի գերակայությամբ:

- Առողջությունը բնական է, բացարձակ, կյանքի արժեքն է, և զբաղեցնում է արժեքների հիերարխիկ աստիճանի ամենավերին աստիճանը: Սովորաբար մարդիկ գիտակցում են առողջության արժեքը միայն այն ժամանակ, երբ այն գտնվում է լուրջ վտանգի տակ կամ գրեթե կորցված է: Առողջությունը ոչ

միայն մարդու սոսկ գոյությունն է առանց հիվանդությունների կամ ֆիզիկական արատների, այլ նաև կենսական էներգիայով լեցուն, հասարակական և սոցիալական կյանքին ակտիվորեն մասնակցելու, մարդու իրավունքներից անկաշկանդ ձևով օգտվելու և արժանապատիվ կյանքով ապրելու ընդունակությունն է:

- Մարդու առողջության իրավունքը առողջության հնարավորինս բարձր չափորոշիչով ապահովված լինելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ տարաբնույթ հաստատություններից, ապրանքներից, ծառայություններից և պայմաններից օգտվելու՝ պետության կողմից երաշխավորված իրավունքն է: Մարդու առողջության պահպանման իրավունքը սուբյեկտիվ իրավունք է, որը պատկանում է իրավահարաբերությունների կոնկրետ սուբյեկտների և իրավունքի տեսության մեջ առանձնանում է որպես սուբյեկտի հնարավոր, թույլատրելի, ինչպես նաև իրավաչափ՝ օրենքով երաշխավորված վարքի սահման և որպես սուբյեկտի հնարավորություն իր հայեցողությամբ բավարարել այն պահանջմունքները, որոնք սահմանված են օբյեկտիվ իրավունքով:

- Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը որպես հիմնական սահմանադրական իրավունքներից մեկը և որպես բարձրագույն արժեք անօտարելի իրավունք է, առանց որի իմաստազրկվում են անհատի շատ այլ իրավունքներ և արժեքներ: Այդ իրավունքի սոցիալական բնույթը կայանում է նրանում, որ ոչ միայն անհատը պետք է հոգ տանի իր առողջության մասին, այլ պետությունն ու հասարակությունը նույնպես պետք է բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկեն մարդկանց առողջության պահպանման և բարելավման ուղղությամբ: Հենց այս իրավունքում է, որ առավել պարզորոշ երևում է անհատի և պետության փոխադարձ ազատությունների և փոխադարձ պարտավորությունների սահմանները, անհատական և հանրային շահերի հարաբերակցությունը:

- Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը՝ որպես անօտարելի իրավունք պատկանում է մարդուն ի ծնե և, ոչ ոք չի կարող նրան զրկել այդ իրավունքից և, այն ոչ թե սահմանվում է ընթացիկ օրենսդրությամբ, այլ ճանաչվում, երաշխավորվում և պաշտպանվում է պետության կողմից՝ որպես արդեն գոյություն ունեցող մարդու բնական իրավունք: Եվ ինչպես առողջության պահպանման իրավունքը, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը նույնպես դիտվում են որպես մարդու ամենակարևոր սոցիալական իրավունքներից մեկը, որով վերջինիս ապահովվում է արժանավայել և բարձրորակ կյանք:

- Մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու և առողջության պահպանման իրավունքները՝ որպես բազային սոցիալական իրավունքներ չեն կարող դիտարկվել և կյանքի կոչվել իրարից անկախ, քանի որ դրանք փոխլրացնում են մեկը մյուսին, բխում են իրարից և կոնկրետացնում են մեկը մյուսին: Առողջության պահպանման իրավունքը մեծամասամբ և ավելի հաճախ իրագործվում է առողջությունը կորցրած անձի կամավոր գործողություններով՝ ուղղված բժշկական օգնություն և սպասարկում ստանալուն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են Հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Արևշատյան Կ. - Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի իրացման երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում // «Արդարադատություն» գիտական հանդես, Հունիս 2 (29), 2015, էջ 48-59:
2. Arevshatyan K. - The legal regulation and the guarantees of the right to medical care in the Republic of Armenia // Восточноевропейский журнал общественного здоровья, науко-практичний журнал, Украина, Киев, № 1 • (21) 2013, էջ 82-83:
3. Արևշատյան Կ. - Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի ամրագրման կարևորությունը երկրի Հիմնական օրենքում // «Արդարադատություն» գիտական հանդես, Հունիս 2 (17), 2012, էջ 49-61:
4. Arevshatyan K. - The protection of patients' rights and fundamental freedoms based on the assessments of the European court of human rights // «Արդարադատություն» գիտական հանդես, Դեկտեմբեր 4 (15), 2011, էջ 50-53:
5. Արևշատյան Կ. - Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական պաշտպանության մեխանիզմները // Բժշկություն, Գիտություն և Կրթություն» գիտատեղեկատվական հանդես, № 6, 2010, էջ 17-20:
6. Արևշատյան Կ. - Մարդու իրավունքների պաշտպանությանը և հանրության առողջության պահպանմանն ուղղված միջազգային իրավական ընթացակարգերը // «Առողջապահություն» տեսական, գիտամեթոդական, կազմակերպական, գործնական հանդես, № 1 (278), 2008, էջ 17-19:
7. Արևշատյան Կ. - Եվրոպական դատարանի կողմից մարդու իրավունքների գնահատումները առողջապահության կոնտեքստում // «Առողջապահություն» տեսական, գիտամեթոդական, կազմակերպական, գործնական հանդես, № 1 (274), 2007, էջ 15-16:

АРЕВШАТЯН КОРЬЮН ГРИГОРЕВИЧ

ВНУТРИГОСУДАРСТВЕННЫЕ ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА ЧЕЛОВЕКА НА ПОЛУЧЕНИЕ МЕДИЦИНСКОЙ ПОМОЩИ И ОБСЛУЖИВАНИЯ

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению проблем реализации конституционного права человека на получение медицинской помощи и обслуживания, уточнение понятия, содержания и структуры этого права.

В диссертации Автор выявил важность и необходимость закрепления положения «право человека на получение медицинской помощи и обслуживания» в Основном законе страны. Так как право на охрану здоровья является одним из базовых социальных прав, связанных с правом на получение медицинской помощи и обслуживания, Автор попытался прояснить оправданность отсутствия положения «право на охрану здоровья» в конституции и пришел к выводу, что эти два базовые социальные права не могут рассматриваться и претворяться в жизнь независимо, так как они взаимодополняют, проистекают и конкретизируют друг друга. Поэтому предложено в результате конституционных реформ закрепить право человека на охрану здоровья в Основном законе в следующей редакции: «Каждый имеет право на охрану здоровья. Для охраны, улучшения и укрепления здоровья государство осуществляет установленные законом здравоохранительные программы и мероприятия».

Автор коснулся одной из важнейших гарантий конституционного права на получение медицинской помощи и обслуживания – медицинском страховании. В РА отсутствует отдельное действующее законодательство относительно медицинского страхования, и эта сфера руководствуется общим законодательством о страховании. Одним из первых шагов является принятие закона РА «О медицинском страховании» и наличие обязательных условий правового регулирования, обеспечивающих его применение, чем будет полноценно гарантирована доступность медицинского страхования и реализации связанного с ним конституционного права на получение медицинской помощи и обслуживания.

Автор работы, на основе многостороннего исследования опыта ряда стран, предложил в качестве правовой гарантии реализации конституционного права на получение медицинской помощи и обслуживания создать в РА действенный механизм сферы медицинской помощи и обслуживания, который будет внесудебным инструментом и полностью покроет процесс регулирования возникших в сфере медицинской помощи и обслуживания правонарушений, в рамках принятого соответствующего закона. Речь о внедрении института омбудсмена системы здравоохранения.

На основе исследования закрепленного внутригисударственными и международными правовыми актами права на получение медицинской помощи и обслуживания Автор приходит к заключению, что злободневно законодательно дополнить и закрепить права человека при получении медицинской помощи и обслуживания. В частности, при обращении за медицинской помощью, а также при получении медицинской помощи и обслуживания, каждый должен иметь право:

1. выбирать осуществляющего медицинскую помощь и обслуживание (право на свободу выбора),
2. получать медицинскую помощь и обслуживание в условиях, соответствующих медико-гигиеническим требованиям (право на соблюдение медико-гигиенических нормативов),
3. требовать обеспечение тайны сведений о состоянии его здоровья в результате обращения к врачу, выясненных в течение обследования, диагностики и лечения, за исключением предусмотренных законом случаев (право на приватность и конфиденциальность),
4. быть информированным о состоянии своего здоровья и давать согласие на медицинские вмешательства (право на информацию, право на согласие),
5. отказаться от медицинского вмешательства, за исключением предусмотренных законом случаев (право на свободное волеизъявление),
6. удостоиться уважительного отношения со стороны осуществляющих медицинскую помощь и обслуживание (право на уважение и достоинство),
7. получить медицинскую помощь и обслуживание вовремя, в предусмотренные сроки (право на уважение времени пациента),
8. получить медицинскую помощь и обслуживание в безопасных условиях (право на безопасность),
9. пользоваться медицинской помощью и обслуживанием по новейшим методам (право на инновации),
10. получить высококачественную медицинскую помощь и обслуживание, основанные на современных нормативах (право на соблюдение стандартов качества),
11. по возможности быть лишенным страданий и боли в любом периоде медицинской помощи и обслуживания (право на предотвращение по мере возможности страданий и боли).

В диссертации, изучив данные вопросы, автор делает не только теоретические выводы, но и представляет ряд практических рекомендаций для усовершенствования законадательства и правоприменительной практики Республики Армения, исходя из императива гарантии конституционного права человека на получение медицинской помощи и обслуживание.

AREVSHATYAN KORYUN

DOMESTIC LEGAL PROBLEMS OF IMPLEMENTATION OF CONSTITUTIONAL HUMAN RIGHT TO RECEIVE MEDICAL CARE AND ASSISTANCE

SUMMARY

Thesis deals with the problems of the constitutional right of a person to receive medical care and services, refinement of the concept, content and structure of this law.

In the dissertation the Author has revealed the importance and the need to strengthen the position of "the human right to receive medical care and services" in the Basic Law of the country. Since the right to health care is one of the basic social rights related to the right to receive medical care and services, the Author attempted to clarify the lack of justification for the provisions of the "right to health" in the constitution, and came to the conclusion that these two basic social rights cannot be considered and implemented independently, as they are complementary, stem and elaborate each other. Therefore it is suggested as a result of constitutional reforms to consolidate the human right to health care in the Constitution as follows: "Everyone has the right to health care. To protect, improve and promote the health state carries out the statutory health programs and activities."

Author touched one of the most important guarantees of the constitutional right to medical care and services - health insurance. In RA there is no single existing legislation regarding health insurance, and this area is governed by the general law on insurance. One of the first steps is the adoption of the Republic of Armenia Law "On medical insurance" and the presence of the prerequisites of legal regulation, to ensure its implementation, which will be fully guaranteed access to health insurance and the implementation of the related constitutional right to medical care and services.

Author of a paper on the basis of multilateral research experience of a number of countries, proposed as a legal guarantee of the constitutional right to receive medical care and services to create an effective mechanism in the Republic of Armenia in the scope of medical care and services, which will be extrajudicial tool and completely cover the regulatory process have arisen in the field of health care and service offenses under the enactment of legislation. It is about the implementation of the Health Care Ombudsman Institution.

Studying the human rights in obtaining medical care and services fixed by national and international legal acts, the author comes to the conclusion that it is urgent to complement and consolidate human rights in obtaining medical care and services. In particular, when applying for medical assistance, as well as access to health care and service, everyone should have the right to:

1. to choose providers of medical treatment and services (freedom of choice),

2. to receive medical care and service in an environment appropriate health and hygiene requirements (right to respect for health and hygiene standards),

3. require the provision of secret information about the state of his health as a result of treatment to the doctor, clarified during the screening, diagnosis and treatment, except in cases prescribed by law (the right to privacy and confidentiality),

4. to be informed about his/her health status and to consent to medical interventions (the right to information, the right to consent),

5. to refuse medical intervention, except for cases prescribed by law (the right to freedom of expression),

6. worthy of respect by offering medical assistance and services (the right to respect and dignity),

7. receive medical treatment and services on time, within the prescribed period (right to respect for the patient's time),

8. receive medical treatment and services in a secure environment (the right to security),

9. use the health care and service on the latest methods (right to innovation),

10. receive high qualified medical care and services, based on up-to-date standards (the right to quality standards),

11. possibly be devoid of pain and suffering in any period of medical care and services (the right to prevent as far as possible pain and suffering).

After a careful study of these issues in the dissertation, the Author has presented not only theoretical findings, but also a number of practical recommendations for improvement of legislation and law enforcement practice of the Republic of Armenia, on the basis of the constitutional imperative for guaranteeing human rights to receive medical care and services.